



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 46

✠ ՇԱԲԱԹ ✠

12՝ ՅՈՒԼԻՍ 1908

ԱՇԽԱՐՀԻՍ Է՛Ն ԿԱՏԱՐԵԱԼ ԵՒ Է՛Ն ԳՈՐԾԱԾԵԼԻ ԺԱՄԱՑՈՅՑԸ

ԶԵՆԻԹ

(Տ. ԱՎԱԶՈՐԻԱՆ) ՏՐԿԵՏ ՄՈՒԹԵ ԵՄԵՐՍՈՆԻ — ԲԱՅ ԵԱԼ ԵԱԴԵՏԻՆԵ ՆՈՄԵՐ 52

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Գապը-Ալի հասցեայի թիւ 52



Էջն ուրի, ոսկի ու ոսկի եւ ձեռքի
 Վիանգամայն մեքենաներ
 կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ,
 բայց էական կէտն է լուս. մեքենայ մը ունենալ, որովհետեւ լուս.
 մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
 ցանէ, մինչդեռ գէշ առտակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեան
 եւ աղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր ոչխորէ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՏԹԻՔ ԿԱՅԹ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լուսագոյն է. այն մեքենան ամենէն կտորի լողործուածը,
 հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ ոչխորի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐԱԹԱԿԱՆ
 ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐՍ.

- (1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .
- (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿՍ.Լ.Ա.Թ.Ա.

- (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
- (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

- (1. Սուլթան համամ .
- (2. Սուլթան Պէյազիա, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԿԻՒՏԱՐ

Զարլը Պոյաւ, թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու թոյր ֆաղաֆներու մէջ

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչաւանդին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և
 343 կրկին, Տիւզդուլուի տունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 46

ՇԱՐԱԹ

12 ՅՈՒՆԻՍ 1908

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԾՆՈՂՔ ԵՒ ՊԶՏԻԿՆԵՐԸ

Պակաս չի մնալու համար մամուլին օրը օրին ըրած հրատարակութիւններէն, մեր էջերուն մէջ ալ արձագանգել փութալով ըսենք թէ՝ վարժարաններու տարեկան քննութիւնք աւարտած ըլլալով արձակուրդը սկըսած է։ Ասիկայ իբր ծաղիկ ի քթին լուր քշել չենք ուղեր մեր ընթերցողներուն, և ոչ ալ նոր բան մը ըսած ըլլալու յաւակնատութիւնը ունինք, այլ սա կէտը կուզենք շեշտել թէ՝ դպրոցական պարապոյթի ներկայ օրերը տղաք ինչպէս կանցնեն իրենց տուներուն մէջ, մինչդեռ ինչպէս պէտք էին անցընել։ Ահա բուն էական հարցը՝ որ կարժէ պրպտել։

Տղան վարժարանէն դուրս, ծնողական չփաթած մթնոլորտը մտած օրէն, հիմնովին կը փոխուի պէտք է ըսել։ Ասիկայ երբ անկաշկանդ և ազատ կզգայ ինքզինքը վնասելու

կեանքը իր է՛ն արձակ ու համարձակ վիճակին մէջ, կատարեալ դիւանար մը կը դառնայ, շուարած, ինչ ընելիքը չգիտցող, և որ աւելին է՝ մոռնալով պահ մը տարուան ամբողջ տեւողութեանը մէջ ծծած կրթութիւնն ու լրջութիւնը, կը նետուի խաղի և զբօսանքի ծոցը առանց արգելքի, առանց ո՛րեւէ դիտողութիւն մը լսելու իրմէ մեծերէն։

Այս եղանակին, շատ առաւօտ դէմս կելլան դպրոցական պատանիներ, որոնք իրենց հայրիկին ձեռքէն բռնած շուկայ կերթան։ Ասիկայ միջոց մըն է տղան ցերեկուան արեւին ու տաքին փողոցներէն ազատելու, միեւնոյն ատեն ազատելով մայրերը քի-մրմեռի անվերջ դիտողութիւններէն, որոնք ազդեցութիւն չեն ընել բնաւ։

Կան ալ, որոնք գիւղերը օդափոխութեան կը զրկուին, ազգականի մը և կամ ծանօթ

բարեկամի մը տունը, անոնց հսկողութեան յանձնուելով, և սակայն տղաք՝ ոչ շուկայ երթալով կը զսպուին և ոչ ալ ուրիշի մը տունը զրկուելով կ'զգաստանան, անոնք կը մնան մի եւ նոյն անառակ վիճակին մէջ, և ոչ ինչ կրնայ պզտիկ ազդեցութիւն մը ընել անոնց բարոյականին վրայ:

Յաւալի է ըսել թէ՝ ծնողքներէն շատեր փոխանակ ուրախանալու թէ իրենց հոգեհատորը եկած է վախճանի երկու ամիսները իրենց թեւերուն տակ անցնելու, կը տխրին, կանխածն և գէշ կըզգան այս օրերուն՝ մտածելով թէ, այդ փոքրիկ անառակները իրենց հանգիստը եկած են վրդովել և թէ իրենց անտանելի արարքներովը, եկած են գլխովին խանգարել, վրդովել ընտանեկան հանգիստը:

Ասանկ ըլլալով է: Կարելի է որ ծնողք մը մահու չափ ատէ իր զաւակը, և չուզէ անիկայ իր մօտը, և անոր ներկայութիւնը ցաւ, վիշտ պատճառէ իրեն ... ինչո՞ւ այսպէս:

Որովհետեւ մեր ծնողք տղայ սիրաշահիլ չեն գիտեր, անոնք երկու ծայրայեղ միջոցներու կը դիմեն, կամ գերկեցնուն վրայ կառնեն և համբոյրներով կը ծածկեն անոնց անբիծ այտերը ու ճակատը, և կամ այն է՝ որ ոտքերնուն տակը առնելով կը ծեծեն, հարուածներ կիջեցնեն անոնց խմոր մարմնոյն չորս կողմը, իրենք ալ տուժելով ֆիզիքապէս, գլխու ցաւի և ջղային տեսակ տեսակ հիւանդութեանց ենթարկուելով բարկութեան հետեւանօք:

Պէտք է նկատի առնել տղուն տարիքը, միջավայրը և անոր կրթութիւնը: Պէտք է տղուն հետ տղայ ըլլալ ի հարկին, պէտք է անոր հետ քաղցրութեամբ վարուիլ, ոչ չախելու է միշտ և ոչ ալ երես տալու է անդադար: Չափահաս մը գործածելը, անոր հետ վարուիլը աւելի դիւրին է՝ որչափ պատանի տղու մը հետ:

Երջանիկ է այն հայրը որ կրցած է ինքզինքը սեպել սալ տղուն, նոյն բանը նաեւ մայրերու համար ըսելով: Լուրջ նայուածք մը բաւական է տղան զգաստացնելու համար, այդ մի եւ նոյն նայուածքը խորազանի հարուածներէն շատ ու շատ աւելի կազդէ տը-

ղուն վրայ, եթէ նախապէս չփացած չէ անիկայ, ապա թէ ոչ օգուտ մը չունենար:

Նախ զգուշացէք տղաքը չփացնելէ, չափազանց սէրը՝ բոլորովին կաւրէ տղուն բարոյականը, սիրեցէք ձեր պզտիկները առանց կռահել տալու իրենց թէ՝ կը սիրէք, և թէ չափազանց կը գուրգուրաք իրենց վրայ: Ես կը ճանչնամ հայր մը՝ որ սովորութիւն ունի համարել իր պզտիկները անոնց քնացած ատենը. ահա օրինակ մը որ շատ գեղեցիկ արդիւնքներ տուած է, այդ հայրը հանգիստ է, ինչպէս նաեւ տղան, որովհետեւ չփացած չէ պզտիկը, հայրիկին վախը, և անոր հանգէպ տաճած յարգանքը չի թողուր որ կարգէ դուրս բաներ ընէ և ընդունի ծնողական հարուածները, չախը և բարկութիւնը, տղան հանգիստ է այս սխթմով, ինչպէս նաեւ անոր հայրիկն ու մայրիկը:

Պէտք է տղուն ամէն խօսքը ընել, սակայն չենք խրատեր զրկել տղան իր անմեղ խնդրանքներէն: Միշտ չըլլար, չեմ ի տար, չուզէր, չպիտի ընեմը լաւ բան չէ, ինչպէս նաեւ, բէք աղէկ զաւակս, ըրէ, առ, գընայ, եւլնաները, որոնք կը չփացնեն տղան, միջին ճամբան գտնալ և այդ ճամբէն քալեցնելը մեծ վարպետութիւն է ծնողքի մը համար:

Այս տողերը գրած պահուս, արդեօք քանի՞ քանի ծնողք, հարուածներու տակ կը տանջեն իրենց պզտիկները, որոնք կազդուրուելու պէտք ունին դպրոցական արձակուրդի այս օրերուն, որպէս զի յաջորդ տարի բոլորովին կազդուրած մտնան կրթական սեմէն ներս, արդեօք քանի՞ քանի պզտիկներ փողոցները կը թափուին արեւին ու տաքին մէջ միշտ լսելով օտարական լուտանքները, անէծքները խօսք մտիկ չնեղուն համար:

Ասոնց և ոչ մէկը տեղի կունենայ եթէ մեր ծնողք՝ քիչ թէ շատ տեղեակ ըլլան մանկավարժութեան նոր մէթոտներուն, և թէ գիտնան թէ իրենց դէմինը կատարեալ մէկը չէ, այլ փոքրիկ կակուղ խմոր մը, որուն ձեւ տուողը իրենք՝ ծնողք պէտք է ըլլան:

Վերջացնելէ առաջ բռնաբիւ խրատ մը, եթէ լսելի կրնայ ըլլալ, այն է՝ պէտք է կարելի եղածին չափ անուշ վարուիլ ձեր մինիսիկներուն հետ, քան թէ խստութեամբ, և արդիւնքը ապահովուած պիտի ըլլայ:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

[ՆՈՐԱՎԵՊԻ ՊԷՍ ԲԱՆ ՄԸ]

(Շար. եւ վերջ)

— Է՛յ, սիրային ժամադրութիւնդ ի՞նչ պէս անցաւ. ան պա՛տէ տեսնենք, վրայ բերաւ Արշակ:

— Տեղի չունեցաւ, բարեկամ, ես ալա թուրքա ծին ըսեր էի, ան ալափրանկայ հասկցեր է:

ԵԴԵՄԱԿԱՆ ԴՐՈՒԱԳ

Հոդմահարը

Դեռ մեղքը գործուած չէր:

Տիպար ամուլը, առաջին զոյգը, իր անմեղութիւնը և մերկութիւնը կը պտըտցնէր Նշեմին ընդարձակութեան մէջ:

Աղամ և Եւա, որ բամբաստելէ չէին վախնար, գողտրիկ յանցանքին ծրագիրը կը պատրաստէին հովանուտ ծառերու շուքին տակ:

* * *

Մայիսի առտու մըն էր:

Նախամարդերը՝ լճակի մը եզերքն ընկող մանած, Ուրտի մը անուշութեան մէջ կը մոռնային կեանքի գառնութիւնները:

Միջոց մը Եւա ոտքի վրայ ելաւ, մազերը շտկելու համար:

Դեղանի էր նա, ինչպէս երբէք կին մը չէ եղած:

* * *

Սատանան հեռուէն կը դիպէր զանոնք:

Պանանայի ծառի մը քովի՝ Էին նա և նէ:

— Աստուծոյ հոգը, տեսածներուս մէջ՝ դուն ամէնէն գեղեցիկն ես, ըսաւ Աղամ Եւային:

* * *

Շիկնեցաւ Եւա և իր ամօթը ու գոհունակութիւնը յայտնի չընելու համար, այդ լայն տերեւներէն հատ մը բրջուց և անոր ետին ապաստանեց իր ժպտուն դէմքը:

* * *

Այդ օրէն ի վեր կիները ընդունեցին հողմահարին գործածութիւնը:

Յ. ԱԼՓԻԱՐ

ԻՆՉՈՒ ԶԱՐՄԱՆԱԼ...



— Ի՛ր տունէն փառասուն քայլ անդին եղող դրացիին (.) ոսպ չը շամպրով այցելութեան գացող սիկիներուն:

— Տիկիներն աւելի սպասունին հագուեցրնող խղճամիս (.) ամուսիններուն:

— Մեր տեսներէն ոմանց աներեսութեան:

— Գու՛մ-գաբուցի կնկան մը հագար տեսակ հայիտութիւններուն:

— Դիւերները ամուսիններէն քնացնելի վերջ, մութ սենեակի մը պատուհանին առջեւ նստող եւ յուսկային որ կողմէն ծայր տալուն սպասող կնիկներուն:

— Մեր կուսակցութեան ոմանց ամուսնական խնդիրներուն խառնուելուն եւ տանք մէջ զոյգ զոյգ սպասուհի պահելուն:

— Հայերէն լրագիր կարգալը ամօթող գրգօրներուն (վկայ՝ Գոպրա):

— 30 դրո հաճախը՝ զիպիսի մը 300 ոսկի դրամօթիցու աղջկան մը չ'զիջանելուն:

— Այսօրանկայի հետեւելու միասնութեամբ՝ անգիտակցաբար պատիւը վրայ տուող Ուհիներուն:

— Դեռ մայրենի լեզուն չհասկցած, իրենց զաւակները օտար դպրոցներ առաջնորդող խելացի (.) ծնողաց:

— Բանի մը շաբաթը անգամ մը վերջին շոգեմար փախցնող Սկիւսարցի եւ թռեմք փախցնող Մագրի-գիւղի պարոններուն:

— Տարիներով վանառական ամուսին մը երազելէն վերջ, քաղին... ջրհանկիրներէն մեկուն հետ պատկուող օրհորդներուն:

— Ամուսնալուծման համար խումբ խումբ Դասաս. Խորհուրդին դիմողներուն:

— Եւա՛մայնի-փառամայնի անցանելի վիճաբանութիւններուն:

— Կանանց՝ եկեղեցեաց մէջ պօշպօղազութեան, եւ ասոր անոր գլխարկին ու հագուսին մասին քննադատութիւններուն:

— Եւ վերջապէս Մանգումէին ուղղակի եւ զուարթ Հանրագիտակին՝ ալ զաւեւակա, Եօրէն արդարացի դիտողութիւններուն խորս ելլող մեկ փանի մեծ աղաներուն:

Մագրի-գիւղ

ՅԱԿՈԲ ՍԻՎԻԶԻՍԱՐԵԱՆ

ԲՄԱՅԲ

ՉԵՄ ՀԱՍԿՆԱՐ

Կա՞յ միքե աւելի բանկագին, աւելի նուիրական բան մը, քան ներքին գաղտնիք՝ մարդուն :

Մինչեւ իսկ անհունութիւններ պարսկելու ընդունակ այդ սրտին այնքան համեստ զանգուածը՝ երբե՞ն ի վեր արդեօք չե՞ ծարած մեր խորքին մեջ իրեն վստահած ո՛ր եւ է գաղտնիքն իսկ : Եւ ո՞վ կրնայ հերքել թե՛ երբեք դժժած է ան՝ մեր մեջ գոյացած այդ սրտին կտորը . գաղտնապահի հաւատարիմ պատշօնը որուն կ'երթանք ապաւինիլ մեր հոգեկան ինչ-ք, մեր նսր, մեր իսկ գոյութիւնը, եթէ յոյժեղ ենք սիրացած ենք իրեն . . . :

Եւ սակայն . . .

Եւ սակայն, շատ զարմանալի են մարդիկ :

Ըլլայ անձնական, ըլլայ ընտանեկան, ըլլայ նոյն իսկ սիրային . . . , կարճ խօսքով ինչ որ կայ ու կը դառնայ մեր սրտին կամ մեր հոգիին մեջ եւ որոնք մեկ մեկ գաղտնիքներ ըլլալու հանգամանքին տակ կրնան ներկայանալ, զանոնք կը պահենք կը պաշտպանենք մինչեւ մեկ աստիճան . . . Բայց օրին մեկը վերջապէս նոյնքան զարմանալի տկարութիւն մը կուգայ յանկարծ յաղթահարել կարծես մեր աննկարագիր նսրն . . . Եւ ինչ . . . — Բարեկամի մը՝ սիրականի մը՝ մտերիւի մը՝ յանձնելու միամտութիւնը կը ծնինք անիմաստօրէն չեմ գիտեր ի՞նչ բանէ մղուած . . . Եւ յետոյ . . . — ա՛յ մեզի համար հոգ մը, մտասանջութիւն մը կ'ըլլայ գաղտնասացութեան այդ անխորհուրդ պարագան եւ երկրորդէ մը երրորդին ալ հաղորդուելու կարելիութեանը հաւանականութիւնը չարաչար կը գրաւէ մտերեւիս . . . :

Եւ աւելին կայ :

Այլեւս մեր բովանդակ ուշադրութիւնը դէպի հո՛ն կեդրոնացուցած, կաղաչենք կը պաղտաւորենք . . . Եւ հազարումէկ բախանձանք կ'ընենք մեր նոյն այդ անկեղծ բարեկամին՝ սրտակցին . . . մտերիմ դաւանած . . . երանելի անձին . . . որպէս զի իրեն յայտնած այդ գաղտնիքն իսկ պահէ . . . հաւատարմօրէն . . . իբր պաւանդ մը նուիրական . . . ուրկէ՞ կախուած

ե՛ . . . — կ'ըսենք — մեր անձին . . . պատշաճութեամբ . . . :

Եւ հետեւաբար . . . մեր բոլոր ընտանեկան կամ սիրային գործերուն համարակալը կը շինենք զայն մեր իսկ ձեռնովը, որ այլեւս իրաւունքներուն ամենէն նուիրականին դասախազը կ'ըլլայ բնականաբար . . . սուր հետաքրքրութեամբ մը օրը օրին հետեւելո՛ւ, հարցափորձելո՛ւ, պրպտելո՛ւ եւ բնեւոր մեր հոգիին ու սրտին բոլոր շարժումները որոնք ո՛չ սահման կունենան ո՛չ վերապահուելիք ո՛ր եւ է խորք մը իր քննարկի պեղումներուն առջեւ, մեր այդ սիրական մտերիւին . . . լայն տրամադրութեանը . . . տակ . . . : Եւ այս այսպէս կ'ըլլայ ամեն անգամ, մեր բոլոր գործերուն մեջ, որքան ալ զոյգանք մեր անմիջականութեան գաղտնասացութեան վերջ յաջորդաբար ծնելիք վերջնականութեան հանդէպ :

— Ի՞նչ տկարութիւն եւ ի՞նչ ընտանեկան նկարագիր է այս :

= Չե՛մ հասկնար . . . :

* * *

ԻՐԱՅԻ Է . . .

Ծովը՝ հանդարտ, առանց նաւի, առանց ծփուն ալիքներու, առանց հիւսիսի փոքորկի — կ'ըսեն թէ հրապուրիչ չէ՛ :

Նրկնքի անհուն կապոյտը, առանց ամպի կոհակներուն, առանց հողմի, առանց մեզի — կ'ըսեն թէ հրապուրիչ չէ՛ :

Կինը՝ առանց ձեւի շարժումների եւ առիւննող ծեփներու, առանց սեզի սեքեւերի — կ'ըսեն թէ հրապուրիչ չէ՛ :

Ծաղիկը՝ առանց բոյրի, առանց տաքի, առանց գոյնի ու փուռի, առանց ցոլի — կ'ըսեն թէ հրապուրիչ չէ՛ :

Սիրքը՝ առանց խանդի, առանց վշտի, առանց ցաւի տառապանքի, առանց հուրի կ'ըսեն թէ հրապուրիչ չէ՛ :

Բայց . . . կ'ըսեն թէ — խօսող լեզուն՝ անսեքեւեք ու սահուն, աննախանձ ու մեղմուտ, հանդարտ ու ողորիչ — հրապուրիչ է . . . իրա՛ւ է . . . :

ՌԱՏԻՈՆԻԷ

ՀՈՍ ՀՈՍԻՆ ԵԱԲԱԹԸ

ՈՒՏԵԼ

Վարդապետները վանքին հաւերը կ'ուսեցնէ:
Պաթախնիները ասոր անոր դրամը կ'ուսեցնէ:
Շատ մարդիկ չա'տ ապուր կ'ուսեցնէ:
Նեղ պարագայի մէջ ամէն մարդ կ'ըսէ.
— Ինչ կ'ուսեսը հո'ս է:
Երբ ապուշ բան մը ըսենք մեր բաղրոնը
կը պօռաւ:

— Ծօ', ինչ խաթ կերար:
Հարուստ զաւակները իրենց հօրը փարան
կ'ուսեցնէ, կիներն ալ՝ ասոնց փարան:
Որչա'փ մարդիկ կան որ ծեծ կ'ուսեցնէ,
բայց ամենաթեթեւ խօսքը իսկ չեն ուսեր:
Խօսելու ձեւ մըն է.

— Ինչ կ'ուզես ա'ն կեր:
Ես կեանքիս մէջ ժառանգութիւն մը ու-
սելիք չունիմ բնաւ:
Երբ որ մեռնինք, որդերը մեր դիակը
պիտի ուսեցնէ:

Ստորին կիները, երբ մէկը նախատել ու-
զեն, կը հրամցեն անոնց ուսել բան մը, զոր
գրել չեմ համարձակիր հոս:

— ... կե'ր, կը հրամցեն առանց խըպ-
նելու:

Շուկացիները սիրելի բիւծիւր մը ունին,
զոր օրը յիսուն հեղ կը յիշեն և որ կը կայա-
նայ գոնէ խօսքով դիմացինին ուսել տալու
մէջ անա'նկ մը, զոր կարելի չէ բերաննիս
առնել, ո'րչա'փ ալ աղտոտ և ... փիս-պօ-
ղազ ըլլանք:

Սիրահարները ողջ ողջ իրենց սիրուհին կը
խածնեն և ... կ'ուսեցնէ:

Երբ լսենք Դուրեան Սրբազանի քարոզը,
կ'ըսենք անմիջապէս հիացումով.

— Սրբազա'ն, լեզուդ ուսեմ:
Շատ կիներ, հիացող են գրական հան-
ճարիս, յօդուածներէս մէկը կարդալէ վերջ
կ'ըսեն.

— Քա Թօլա', գրիչդ ուսե'մ:
Որչա'փ քարոզիչներ Աւետարանին նա-
խադա սովորեցնենք կ'ուսեցնէ:

Դերասաններ կը ճանչնամ — սիրտեր չկոտ-
րե'նք — որոնք իրենց դերերուն բոլոր բա-
ռերը հո'ւմ հո'ւմ կ'ուսեցնէ:

Բինկեանցի քահանան աստուածաբանու-
թիւնը կերած լմնցուցած է:

Ամէն օր ինչ նախատինքներ կ'ուսեցնէ և
կը մարսենք:

Աստուած հրամայեց ինծի.
— Կե'ր, արբ և ուրախ լեր:

Յաճախ կ'ըսեմ Ե. Արմէնի.
— Հա', խեղճդ ուսեմ:

Որչա'փ աղջիկներու ըսած էք.
— Օրիորդ, չամիչ աջակներդ ուսեմ:

Ամէն անգամ որ դրամ չունենամ, բար-
կութեանէս ինքզինքս կ'ուսեմ:

Ափրիկէի վայրենիները մարդու միս կ'ու-
սեցնէ:

Եւ, աւա՛ղ, ո'րչա'փ ընթերցողներ ունիմ,
որոնք առա'նց Ափրիկէի վայրենիներ ըլլա-
լու, ամէն օր ... իմ միսս կ'ուսեցնէ: (*)

×

Շաքաթ գիշեր, Սկիւտարի Թատրոնը.
Երուանդ Թօլայեան՝ նոր Թատրախաղ մը խա-
ղալէ վերջ, միջնադարին Թատրոնին դրան առջեւ:

Եւկու մարդիկ կարծիք կը փոխանակեն.
— Դուն բան մը հասկցա'ր:

— Հի'չ, մարդուն մէկը ելաւ մէտասի ըսաւ:
Մէտասի, հէ՞...
Խեղճ Կավոօշ, մէտասի ալ պիտի ըլլայիր:

×

Գուռ-գաբուցիութիւն ...:
Գանի մը Գուռ-գաբուցի հաւկիթներ, ի-
րիկուան դէմ, Բըթի-Շանի պարտէզին մէջ.

— Միւսիւ, Օրիորդ և ընկերները:
Կը ճնկեն:

Իրենց մէջէն է'ն խելացին, սիկարէթի
տուփի մը ետին եկած մեզները և օղիները
կը նշանակէ:

Հաշիւի ժամը կուգայ:
Կ'երեւի թէ կառսօնը 40 փարա աւելի կը
պահանջէ:

Կ'երեւի թէ կառսօնը 40 փարա աւելի կը
պահանջէ:

(*) Բաժանորդներէս ոմանք իմ ալ փարա կ'ուսեցնէ:
Ծ. Լ.

— Ինծի նայէ՛, կ'ըսէ երիտասարդներէն մէկը, մենք չենք կողոպտուիր:

— Էֆէնտի՛մ, հաշիւս չիտակ է, կը պնդէ կառսօնը:

— Բառսուն փարա աւելի կ'ուզես կոր, կը պօռայ ուրիշ մը:

Ու անդիէն ուրիշ մը, որ հայիս-հուլիս Սամաթիացի է, կ'աւելցնէ.

— Պանա պագ, պանա պագ, կառսօն, պիզ Պուրսալըզգ, պիզ քիւլ եռութագըզ:

— Պիզտէ Պէյօղլուլըզգ, կը պատասխանէ հանած-վարած կառսօնը, պիզտէ Թօփրագ եռութագըզ:

Ու վէճը կը մեծնայ՝ 40 փարայի համար, անանկ որ պարտէզին մէջ գտնուող բոլոր յաճախորդները գլուխներն կը տնկուին:

— Ճանը՛մ, երկան ըրիք, կ'ըսեն, 60 փարայի համար այսչափ աղմուկ չըլլար, մենք տանք, և դուք սուս եղէք:

Այն ատեն երիտասարդներէն մէկը, հեռոսական ժէսթով մը, սիկարի տուփը մէջտեղ կը հանէ, որուն ետին խղճմտօրեն նշանակած էր օղիներու մեզները:

— Ես հոս բոլորը գրած եմ, կ'ըսէ սիկարի տուփը օղին մէջ երեքցնելով:

Ներկաները կը մարին խնդալէ, իսկ ես խայտառակութենէն գետնին տակը կ'անցնիմ:

ԲԱՐՈՅԱԿՈՆ

Բարեկամներ՛ս, —

Ս. — Բերայի պարտէզին մէջ ախճապահութիւն չըլլար:

Բ. — Պրուսացի, Բերացի, Գում-գաբուցի կամ Ասա-փազարցի ըլլալը մարդուն խելացութեանը ոչինչ կ'աւելցնէ:

Գ. — Բերա ելողը 40 փարա վրայ տալը պէտք է աչք առնէ:

Դ. — Վերջապէս, ամէն տեղ... սիկարի տուփին ետին մէյլանէի հաշիւ չի գրուիր:

×

Ճառարանի մը մէջ, Եանիկ, Ճագօման կամ Գնալի Շահապը...

Pas de réclame, — Վ. Փափագեան կը նեղանայ կոր:

Յանախորդ մը ներս կը մտնէ եւ կառսօններու շէֆին.

— Շնորհով կառսօն մը դիպէ՛ ինծի:

Կառսօններու շէֆը — քիչ մը տանձ-գրուիս — կը պատասխանէ՝ մընիւն աչքի անցընելով.

— Չմնա՛ց, պարոն, սպառեցա՛ւ:

×

Սոսոյ աղբիւրէ կը տեղեկանամ թէ՛ Լիւա — որ Վահան Փափագեանը չէ՛, Ասուած չընէ՛ — այս շարժու պիտի այցելէ Գնալը կողմին:

Գնալըցիներուն աչքը լոյս ուրեմն:

Միայն թէ կը յանձնարարեմ որ քիչ մը զգուշութեամբ վարուին, որովհետեւ Լիւա՛ իր ֆօսալը հետք պիտի տանի:

×

Բերացի օրիորդ մը՝ հայ գրագիտուհի ըլլալու մարմաջէն վարակուելէ, նախանձելով անշուշտ Սիպիլէն, Հայկանուշ-Մառքէն, Զարուհիէն, եւայլն:

Ի մօտոյ հրապարակ պիտի հանէ երկու մեծածաւալ հասորներով վէպ մը, որ պիտի ծախուի... 5 դրուշ:

Ամէն Ֆէհիմ՝ Թասերական աժան երեկոյն տալէ վերջ, ինչո՞ւ Բերացի օրիորդը աժան գրականութիւն չընէ:

Օրիորդը մտադիր է եղեր իր այս գիրքէն շահելիք դրամով... իր օժիտը պատրաստել:

Ձեր ձեռքը կը խնդրեմ, օրիորդ, ինչպէս նաեւ ձեր... դրամօժիտը:

×

Պ. Հրանտ Նազարեան — զօմիսիօնէն — ի մօտոյ հրապարակ պիտի հանէ անխալ բանաստեղծուհի մը:

Դիմելու խիստ աժան:

Oceasiln առիթը մի՛ փախցնէք:

×

Ի՞նչ կը կարծեն:

Ձեմ գիտեր ի՞նչ կը կարծեն գրականութիւնը:

Ամէն օր կը հանդիպիմ մարդոց, որոնք դիմացի կողմի մայթէն իմ կողմի մայթէն կ'անցնին աճապարանքով՝ զիս տեսածնուն պէս:

— Խիստ կարեւոր ըսելիք մը ունենալուն, կը խորհիմ:

Ձեռքս կը սեղմեն և առանց խաբար հարցընելու:

— Բան մը ունիմ ըսելիք քեզի, ա՛լ դուն ատկէ խրլա՛խ յօդուած մը կը շինես:

— Ի՞նչ բան:

— Ամէն մարդ խնդալէ կը ճաթի խաչո՛ր:

— Ըսէ՛ք, նայիմ, կը հարցնեմ անօթի քրոնիկազրի ստամոքսին համար նիւթ մը գտած ըլլալուն համար ուրախ:

— Մտիկ ըրէ՛, այս առտու յօրանջած ատենս բերանս ճանձ մը մտաւ:

— Է՛յ, կ'ըսեմ, պատմութեան մնացած մասին սպասելով:

— Ահա՛, ատկէ սքանչելի յօդուած մը կ'ելլէ:

— Համմէ՛:

— Դուն կը շինես, կը շտկես ... այս շաբթու կը սպասեմ հա' :

Եւ կը ձգեն կ'երթան ինծի նիւթ մը տուած ըլլալնուն համար երջանիկ :

Կը փափաքիմ կօշիկս հանել և իրենց գըլուխը Ծղաքմիւս ընել, բայց կը մեղքնամ կօշիկս և ո'չ ... անոնց գըլուխը :

Կ'երեւակայեն անոնք թէ ամէնէն պզտիկ միջադէպը, որ իրենց համար մեծ կարեւորութիւն ունի, նո'յնչափ մեծ կարեւորութիւն կը ստանայ ինծի և իմ ընթերցողներուն համար :

Ո'ր մէկը թուեմ այս երկինքէ ինկած նիւթերուն, որոնք ամէն վայրկեան կ'առաջնորդուին ինծի, բերանացի կամ նամակով, Ատա-բազարէն կամ Սամսոնէն, և միշտ սա' յանձնարարութեանը ընկերացած,

— Կը սպասեմ հա' ... չէ՛ Եւ կը վշտանամ :

Եթէ ջանամ հասկցնել թէ՛ իրենց նիւթը կարեւորութենէ գուրկ է և կարելի չէ՛ անկէ ո'չ թէ յօդուած մը, այլ ո'չ իսկ ... Թըթուած մը հանել, գիտեմ թէ մարդիկը պիտի վշտանան և պարապ տեղը թշնամիներուս թիւը աւելցուցած պիտի ըլլամ, հետեւաբար կարի գիւրին միջոց մը գտած եմ :

— Ասոր հաւկիթ առի, հաւկիթներէն մէկը հոտած ելաւ, ասոր վրայ խըյախ բան մը գրէ' ... :

— Շատ աղէկ, կը պատասխանեմ միշտ :

— Երէկ Ղալաթիոյ ժամը կին մը լիմոնաթա խմեց, ասոր վրայ ֆանդէզի մը կը սպասեմ ... :

— Գլխուս վրա'յ ... :

Եւ միշտ իմ գիտցածներս կը գրեմ ես :

×

Ուսումնական Խորհուրդը անաբէմա պիտի կարգայ Հինդլեան էֆէնսիի գէմ :

Ինչո՞ւ :

Ուրվհեռու ... կարդացէ՛ք Թերթը :

Հինդլեան էֆ. այս անաբէմային պիտի պատասխանէ ... լուռեամբ :

×

Այս շաբաթ գիշեր Սկիւտար, թէփէի թատրոնը :

Աժա՛ն երեկոյթ :

Ահմէտ Յէհիմ էֆ.ի թատերախումբին կողմէ :

Պիտի խաղցուի ՏԻԻՐԱՆ-ՏԻԻՐԱՆ :

Օր. Շամիրամ և Օր. Նուարդ, համակրելի և շնորհալի chanteuseները :

Պ. Աշոտ Պիւքիւճեան, մեծահամբաւ երգիչը և Սկիւտարի Սըլանտիդ-Գաֆէին Տնօրէնը հռչակաւոր Բեքիբը պիտի երգէ :

Մէկ վարագոյր զաւեշտով մը ներկայացումը պիտի սկսի :

Օ'ն, օ'ն, օ'ն, ... Թէփէի թատրոնը :

×

Ըստ Գրիգոր Մալխասի, Քօնօկրաճներ պիտի գեղեղուն վարժարաններու մէջ՝ օտար լեզուներու արտասանութիւնը ուսուցանելու համար :

Կամաց կամաց վարժապետներու փապուճը բամբ պիտի ելլէ :

×

Ուրախութեամբ կը ծանուցանենք թէ մեր համակրելի աշխատակիցը Երուանդ Թօլայեան այս շաբթու աղջիկ զաւակ մը ունեցաւ :

Մեր բարեմաղթութիւնները :

ՀՈՍ-ՀՈՍ

ԿՍՄ

ԿԱՎՌՕՇ

ԽՈՋԱԿԻ ԱՌԵԻՏՈՒՐ ԸՆՈՂՆԵՐՈՒՆ

ՊԱՏՐԱՍՏ ՀԱՇԻԻՆԵՐ ԽՈՋԱԿԻ

Հ Ե Ղ Ի Ն Ս Ա Կ

ՅԱԿՈԲ Յ. ՏՐԷՋԵԱՆ

(Այժմ ԴԻՈՆԵՍԻՈՍ ՔԱՀԱՆԱՅ)

Հարկ չկայ այս կարեւոր գործին համար խօսիլ, խոզակի առուտուր ընողներուն ծանօթ է անոր անհամեմատ օգտակարութիւնը :

Թաց խոզակի և քիլէի հաշիւները ամբողջովին պատրաստուած են երկու հատորի մէջ :

Ա. հատորն է ԽՈՇԻՐԻԼ փոխարժէքը.

Բ. հատորն է ԽՈՇԻՐՍԻԳ փոխարժէքը.

Ա. հատորին գինն է 10 զրշ. փոսթի ծախքով.

Բ. հատորին գինն է 15 զրշ. փոսթի ծախքով.

Երկու հատորները միասին գնողը պիտի վճարէ միայն 20 զրշ. :

Ո եւ է սխալ մը չըլլալու համար մեծ խնամք տարուած է. հեղինակը Պոլիս գտնուած է յատկապէս տպագրուած ատեն :

ՓՈՐՁՈՒԱԾ, ՔՆՆՈՒԱԾ, ՃՇԴՈՒԱԾ Է

Դիմել՝ Պոլիս, Պապը-Ալի ճատտէսի Յովհ. էֆ. Ազնաւորեանի, թիւ 56, Իզմիտ, սարաֆ Մոմճեան Եղբարց :

ՀԻՒՐ ԹԷ ՓՈՐՁԱՆՔ

Ամրան ներկայեղանակին օդափոխութեան երթալը պարծանքի կարգ անցած է ալ :

Օդափոխութիւն բառը որ իր մէջէն դուրս կուտայ արդէն ֆիզիքական իմաստ մը, բոլորովին և գլխովին տեղի տուած է նիւթականին, այնպէս որ, երբ ասկէ 40-50 տարիներ առաջ հիւանդները միայն օդ կը փոխէին, և կամ ատոր պէտքը զգալի կըլլար ըստ բժշկական հրահանգին, հիմա օրը քաջ մը հաց մարսողը և չորս ժամ առանց հեւալու ճամբայ քալողներն անգամ օդափոխութիւն կըսեն կը վազեն կոր, մանաւանդ վերջին տասը տարիներուն այս բանը այն աստիճան նորոթի կարգ անցած է, որ հանրակառքով Բերայի շիտակէն անցնիլը այնքան արտառոց չի համարուիր կոր, որչափ օդափոխութեան չերթալը՝ ամօթ :

Գիտութիւնը մեզ կ'ուսուցանէ թէ՛ Մարտ ամիսին մէջն է որ մարդուս երակներուն մէջ արիւնը ճեղքւում (շրջան) կընէ, սակայն բժշկութիւնը մէջ, իրականին մէջ կը տեսնենք որ այդ բանը Մարտին չէ՝ այլ Յունիսին կըսկըսի, քանի որ մեր մէջ կիներ՝ այդ ամիսին կը բորբոքին, կը փրփրին, խուռուխաշ կըլլան, արիւնին գլուխննին կը խուժէ և ահա այդ irrité վիճակնուն մէջ կամ ծովը կը նետուին և կամ ... իրենց ամուսնոյն վիզը :

Գիտնալու էք որ երբ կինը ուզէ և կամի, ալ ատոր ճարը կա՞յ մի : Խեղճ ամուսինները չուցիլը չիկան մէկ կողմ դնելով գլուխ կը ծռեն և կը համակերպին իրենց զիւրներուն քաբոխներուն, և տեղի կուտան անոնց առաջարկներուն, անոնց ըսածը կըլլայ և իրենք ծանրապէս կը առժեն :

Հաւատացէք, մարդ կին ծնած ըլլալու է աշխարհ վայելելու համար, անոնք են որ տիւտիւկը կը չալեն, անոնք են որ ուզած ֆէյֆերնին չաքմիւս կընեն, վերջապէս անոնք են որ կը զգան թէ կապրին և կը վայելեն այնքողոր անուշութիւնները՝ զորս նախախնամութիւնը մարդուն զբօսանքին համար ստեղծած է :

Այս կարգէն է նաեւ օդափոխութիւնը :

Ինչպէս ամէն պարագայի մէջ, նոյնպէս և այս գիւղագնացութեան առթիւ խօսելով, կինն է որ է՛ն շատ պէտք ունենալ ցոյց կուտայ այդ բանին, անիկայ է որ այս ամիսներուն կը թեւաւորուի ինքզինքը քաղքէն դուրս՝ գիւղերը նետելու համար, մինչդեռ անդին՝ ամուսինը, որ ամբողջ ձմեռը պնօն-օրէն նեղուած էր, կը հազար, կը թքնէր, յարգելով էջօնօմին՝ բերանը անգամ չի բանար և մտքէն իսկ չ'անցնէր բացառիկ ծաղքեր ընելով պիւտճէն խանգարել և օդափոխութեան երթալ, մինչ տիկինը որ կայսայի պէս փքուն մարմին մը ունի, օրը քաշուկէս հաց կ'ուտէ, և քալած ատեն սենեակին տախտակամածները ճզիկ ճզիկ կուգան, ահա այդ բանկտուզն է որ պէտքը զգալի ցոյց կուտայ այդ բանին և *coûte que coûte* կը յաջողի խօսքը անցնել, կը պէճէրուի պարզապէս :

Թէ ինչ փորձանքներու ենթակայ կըլլայ ամուսին մը օդափոխութեան այս եղանակին տուէն տեղէն խախտելով գիւղ կամ կղզի երթալուն առթիւ, պատմենք հոս վարը և դուք կարդացէք, եթէ չուք տեղ մը ունիք և կամ բորեալը իս սենեակ մը :

* * *

Անիգտոս աղա Սարախեան, հազիւ երկու տարի կար որ պոչը շտկած էր : Պոչոյ բազմամարդ արուարձաններէն միոյն մէջ կուկիկ տան մը տէր, իր մաղազային հասոյթովը կապրեցնէր կինը և երկու աղջիկները :

Բայց տեսէք որ բաղդը երբ հաճի ժպտադէմ այցելել մէկուն, նախապէս զանգակներով չիմացնէր իր գալուստը, այլ յանկարծ երեւան կուգայ, և վայ ան մարդուն որ անակնկալ այդ հիւրին ի տես խելքը կը թըռցնէ :

Անիգտոս աղային բիւնֆօ մը զարկած էր վերջերս, բայց որչափ, ատիկայ գաղտնիք մը մնաց, սակայն երկու օր վերջ կինը մութ վախէն քաշուեցաւ, աղջիկները պոյ պոյ

Ֆիստամաններ չինեցին, և բուն իսկ Անիգտոս աղան որ սովորութիւն ունէր երկու ծանրաբեռն տոպրակներով տուն դառնալ, բեռնակիրի մը ձագ ետեւէն ձգած սկսած էր գալ իրիկունները:

Դրամը ինչէ՛ր չընէր ...:

Անցեալները իրիկուն մը, տիկին Պիստոս երբ կուհեց թէ իր Անիգտոս ամուսինը մէկ երկու հատ աւելի փախցուցած է, դէմն անցաւ:

— Է՛յ ... Անիգտոս աղա, տանձ էր նէ եղաւ, խնձոր էր նէ բուսաւ ..., հիմա ալ ըսելիք չունի՞ս ես ...

— Խեր ըլլայ կընիկ, ուրախութեան բան մը կայ աճապ, զաթը անանկ է, Աստուած մէյ մը երկրիւ գուլունմ ըսէ՛ նէ, իրարու վրայ կուգայ ...

— Տահա՛ ի՛նչ ըլլայ, չօգ չէ՛յ ... փառք Աստուծու ուժ ըսելիք տեղ մը չունինք ...

— Ինչո՛ւ, երեկ գիշեր տիօր լուս սանձի ըրի ըսիր ...

— Սանքի ուժ կըսեմ նէ ախ քաշելու բան մը չունինք ըսել կուզեմ՝ կոր, հասկցիր իշտէ ...

— Է՛հ զահէր սէվտալը էիր՝ քի ախ քաշես ... նէ իսէ լեզուիդ տիպը պան մը կա՛յ ամա, Աստուած տայ խուռպաղըճըխ չըլլայ ...

— Քեզի հետ ալ լախըռտը ընէ նէ մարդ ճուռճինաի կը տանիս, սանքի ըսել կուզեմ՝ կոր քի, աճապա ...

— Ի՛նչ, զէնկինցանք տէյի ես կնիկ առնեմ՝ դուն ալ պաշխա էրի՛կ մը առնես տէ բերան փո՛խ ընենք, չիւնքիւ փարա ունի՛նք ես, մարդ այրպլամիշ չընէր հիմա, մօտա է կըսեն, առջի վախիթնիս ըլլար նէ մեզ խաչը կը հանէին ...

— Սա նայէ, հալէ աչկդ դուրսն է ... կըսէ կինը յոնգերը վեր առնելով ...

— Հա՛, պագի դուրս կը նայիմ կոր քի, խառըղճի մը ամսի տէ առնենք տէյի ... մէտէս բէք կուզէ կոր ...

— Ըսելիքս սա է՛ր քի, աճապա, չիյտեմ ... սանքի ... կըսեմ կո՛ր քի ...

— Ինձի նայէ Պիստոս ... գիտես քի սընըրը եմ, ատանկ ճիւլէներու չեմ ի գար, գէշ կըլլամ կոր ...

Տիկին Պիստոս, տեսնելով որ ամուսինը

կակողնացը կերած է և թէ իր վրայ ունեցած սէրը ամրապնդուած, կը շարունակէ:

— Դիտեմ քի իս կը սիրես, հէմ հոգիիդ մէջը տեղ տուած էս ինձի ամա՛ ... խուռու խուռու սէրը փարա չընէր ...

— Բէք աղէկ հոգիս ... քեզի թաշտէլէնի ճուր առնեմ, անով թրջէ ...

— Շնորհակալ եմ ամա՛ ... գիտե՛ս ես կըլլայ քի աս տեսած միսերդ պիրտիւղ չեն մնար, կը վախնամ քի միսերս խայիպ կընեմ...

— Անոր խոլայը կայ կիւլիւմ, ամէն օր մախառնա կէր, հացն ալ թաղէ բոր թառափէն տէվամ ըրէ, երկու խաթ կըլլաս ...

— Չէ՛, չէ՛, ատ չէ ըսելիքս, սանքի կըսեմ կոր քի, էկէր խապիլը կա՛յ նէ մեզ աս տարի ...: (Այն ատեն թեւերուն տանթէնները վեր կառնէ և երկու ձեռքերը Անիգտոս աղայի պխերուն կը տանի ...):

— Վազ եկուր կնիկ, հիմա աղջիկները բաթ տէյի ներս կը մտնան, ասոր գիշերն ալ կայ ...

— Թոհաֆ չէ՛յ, եսպանձիս չե՛ս ես ... անոնք ալ տեսնան տէ թող սովորին քի էրիկ մը ինտոր պէտք է սիրել տէյի ...

— Քա անոնք քեզի դաս կուտան, շաշխըն, հիմա ատ բաները չը գիտցող չիգայ, ատ թառափէն է՛ն չի հաւնածդ բոօֆէսոռ է ...

— Ի՛նչ է նէ, սա պիտի ուզէի ըսել քի... թեւերս կը տեսնա՛ս կոր ...

— Է՛յ ..., սէպէ քի կը տեսնանք կոր... ետքէն ...

— Կէօքս կը տեսնաս կո՛ր ես ...

— Է՛յ ճանըմ հասկցանք, ետքը ...

— Նայէ բիւթիւն խապառթ խապառթ է եկէր, խալի է տառցէր վուճուտս տէ տահա հիչ ֆառլին չես երթար կոր ...

— Կընի՛կ, կարգուելնիս քսանը վեց տարի եղաւ, ալթըն նէ դուն պըրըխիս ճերմակները տէսիր, նէ ալ ես քու կէօքսիւղ խապառթներուն նայիմ ..., ալթըն նայէ հասուկ աղջիկներ ունինք, մեր չաղը անցաւ...

— Ամա՛ն ... ես ատ միտքին չեմ ըսեր կոր ... անմատա երկնցուցիր Անիգտոս աղա, պագի բանը աչքիդ մէջը նայիմ նէ կը հասկնաս, որ սահաթ է պիւպիւլ եմ կորէր դէմդ, հիչ անտեղուանքը չես ...

տեցար, պատրէն խումանտա ընես տէյի, խապտանիլ պէս ... միտքդ է ...

— Ես անոր համար չեմ, սանքի կը քաշուիմ կոր ըսելու, տար տէ ո՛ւր կուգես նէ հոն տար ...

— Ինծի ձգելու ըլլա՞ն նէ, ես քեզի չիտակ ետթալա օտաւին կը տանիմ հիմա ...

— Իչտէ ի՞նչ գիտնամ, ետզլլի, հալիւր ո՛ւր կերթան... ամէն մարդ ո՛ւր կերթայ...

— Մէղաուլի ... քէք թէզ չէ՞ կնի՛կ...

— Ամա՛ն Անիգտոս աղա, կէնէ ապուխ սապուխ թող կուտաս կոր ...

— Էյ չէնէ ըսէ, նայինք ո՛ւր կամք կընես կոր երթալու, պարէ մասրաֆ մըն նէ պիտի ընենք նէ ուզածնիդ ըլլայ ...

— Բեզի սըխըտար ըսեմ քի տեղը Պօղազ իչի ըլլայ, տունը կէնիչ ըլլայ, մահալէն ալ կէչեր ...

— Էյ ... տահա՞ ...

— Սանկ վարի խաթ օտան նստելու ըլլամ նէ ծովը թապախի պէս առջիս ըլլալու է, օթա խաթը նստիմ նէ չորս դիս տեսնալու եմ, վերի խաթը նստելու ալ ըլլամ նէ թախ քէօրիւնէն անցնողը ճանչնալու խըտար պարսը ըլլալու է ...

— Չըսես կնի՛կ, երթամ իյալաթա խուլէսին տէ նայիմ քիրայի կուտան, մէյ մը հարցունեմ ... խելքի՛դ եկաւ քա, ո՛ւր եսք, նասըլ արգու է ատիկայ ...

— Ճանըմ, անէքի փարայ մըն է պիտի տրուի քիրայի տունի մը համա՞ր նէ, պէտքը չէ՞ քի ուզածիս պէս ըլլայ ...

— Աղէ՛կ ամա, դուն երկինքները օտա կը փնտռես կոր կնի՛կ ... քիչ մը վար ինչի՛ր տէ կէօրիւնէ միւլ ըլլանք, աս դուն խառթալ խուլին ալ անցար, չայլախն ալ ...

— Հա՛, սա ալ ըսեմ քի, տիխաթ ընէս, անանկ թախթա պիթի սիվրիսինէկ, ֆիլան չըլլայ, եանի պիպէտի պէս կէրի վուճուլս...

— Ատոր խոլայը կայ, ես առաջ երկու գիշեր կերթամ կը պառկիմ բոսվա կընեմ, ետքէն դուք կուգաք, չըլլա՞ր ...

— Տէնիզ խըլըսի, եալը ըլլայ քի ցերեկները օլթայով ծուկ բռնեմ տէ իրիկունը ըտախիդ մէզէ ընես ...

— Հա՛, աղէկ կըլլայ կնիկ ամա՞, պազի

օլթային ճանաւար ալ կը դարնուի, տիխաթ ընելու ես քի սախթուլին չի հանես, երկու ոտքը քէօքէք պալըղիներ մը կան քի, չառք միչ ընեն նէ կէչ չառք միչ կընեն ...

— Անանկ օլտուխճա վարի խաթը կէնիչ ըլլայ քի, սալօն չտկենք տէ միսաֆիր գայ, նէ վերերը չի տոտոռողցունենք Անիգտոս աղա ...

— Կայնէ պան հասկնանք կնիկ, մենք ետզլլի կերթանք կոր չէնէ մի օթէլ կը պանանք կոր, տա հասկցուր ինծի, միսաֆիրը ինչ է ...

— Տէր ողորմեայ, զահէր տուռերնիս մէօիւրլէմիչ պիտի ընենք, մեզի մարդ չիգա՞ր, չերթա՞ր..., կետնէն բուսած ենք...

— Ձէ սանքի հալխուն համար կէնիչ տուն կը նայիս կոր նէ հիմակուրնէ ըսէ ճամբայ չեկանք, չիւնքիւ հիչ գործիս չիգար, անանկ ցերեկը լօքանթա, գիշերը օթէլի պէս եկող գացողին մերամ հասկցնելը ...

— Մենք մեզի ալ ըլլանք նէ, պէտք է քի կոկիկ ըլլանք Անիգտոս աղա, սանկ դուռները կոնկին վրայ բանանք տէ, մենք ալ էճէլ պէշիյի նոր մօտա իսկէրմիներուն սանկ ճիվէրնիս փոխնք տէ եայլմիչ ըլլա՞նք նէ, դուրսէն անտղը սանկ ներս նայելու օր ըլլա՞յ նէ, պերնի ճուր վազցունէ տէ հասկընայ քի գէնկինի տուն է տէյի, կրցա՞յ հասկըցունել ...

— Հիմա տա հավէսներդ ետքի պահէ տէ, մոմը առ վեր ելլանք, գէրէ քիչ մը տահա տէվամ ընելու ըլլա՞ն նէ, սօլուխս Ակոբեանին յարկաբաժինը պիտի առնեմ տէ, ինծի կուգայ քի հոն ետզլլիս պիտի դնեմ ձեզ ...

— Ատ ըսած տեղը ծովի քէնա՞ր է...

— Հապա՛, չէ քի մինակ ծովի քէնար... անանկ տեղ մըն է քի, աչքիդ բիւթիւն ուզած բաներդ կերեալ, ան խըտար քի, խելքիդ պիլէ կուգայ ...

— Վո՛ւյ մըսէր Անիգտոս աղա, հիմա ճուկուրնէ չօճօխի պէս բան մը կըլլամ կոր, երբ պիտի լուսնայ տէ երթաս տունին բէհը տաս ...:

Հետեւեալ առաւօտուն Անիգտոս տղա, փոխանակ շուկայ իր գործին գլուխը երթալու, չիտակ վերին Վոսփոր կերթայ ու հոն բաւական մը պտրտկելէ վերջ հազիւ հազ Սառեաբարի բիացային վրայ տուն մը կը գըտնայ կը սակարկէ, կանխավճարը կուտայ և կը դառնայ:

Մեր յաջորդ թիւով պիտի նկարագրենք գիւղագնացութեան փորձանքները, իրենց է՛ն տակ նկարագրականին մէջ, և որ իր իրական գոյներովը, կը յուսանք թէ քրքիչներու և ծիծաղներու առիթ պիտի տայ ամէն անոնց՝ որոնք եօթը օր համբերելու ծանձրոյթը պիտի քաշեն:

Ուրեմն Անիգտոսին շարունակութիւնը՝

յաջորդով:

ԼԻԼԱ

ԿՈՒՋԵՄ ԸԼԼԱԼ ԱՄՈՒՍԻՆ

ԲԱՅՑ ԶՈՎ ԸՆՏՐԵՄ ԻՆՍԻ ԿԻՆ

ՆՈՐ ՊՍԱԿԻՆ ԱՌԹԻՒ

— Կառնե՛ս քեզ կին, բարձրահասակ ու գեղադէմըն Մարի,

— Եթէ չըլլար սիրտը անոր պաղ ու ցուրտ պէս մարմարի:

— Ի՛նչպէս է սա, հարցուցին ինձ, փափկասունըն էօժէնի,

— Թըռի-վըռի է անկկայ ու ինծի չէ՛ արժանի:

— Հապա աղուոր ու լեցունկեկ սա մեր սիրուն Աղաւնի՛,

— Միամիտ է ան քիչ մը շատ ... դիւրախաբ զերթ աղաւնի:

— Հապա, կեցի՛ր անունն ի՛նչ էր, հա՛, յիշեցի Մարիամ,

— Չառնե՛ս ըսի, ատի քեզ կին, յետոյ կուտայ դըդմի համ:

— Չայնովն անուշ, դէմքով սիրուն և անունով Մարգարիտ,

— Բայց ան ալ շատ ծախսել կուտայ, կը սիրէ վարդ մարգարիտ:

— Հայ աղջիկի չիտակ տիպար և աշխատող, Իւղարե՛ր,

— Ափսոս պզտիկ է անի շատ, իսկ ես այլեւս ... անհամբեր:

— Ջարգացած է և ձեռագործ շատ լաւ գիտէ Սաթենիկ,

— Բայց անոր ալ, չիտակն ըսե՛մ, սրտիկըն է բաց ... մատենիկ:

— Է՛հ, չէ մըսեր եկո՛ւր կին ա՛ռ, սըրտի մտքի տէրն Նուարդ,

— Փուշեր ունի բայց ան ըսին ու կը խայթէ խիստ դերթ վարդ:

— Անունն աղուոր, ինքն ալ անանկ, հրաշագեղն սա Յասմի՛կ,

— Վերջի տարին շատ կորսնցուց, պատիւ չունի ան հիմակ:

— Անունին պէս յաւէտ զուարթ ու ճըլ-վըլունըն Զուարթ,

— Ան ալ չիգար իմին գործիս դրամ չունիմ, կուզէ զարդ:

— Է՛հ, ատ հաշուով քեզ յարմար է խընայածէն Շուշանիկ,

— Ա՛ն ալ չըլլար, փարայ չունի, նոյն իսկ վրան մի շապիկ:

— Ա՛լ այն ատեն քեզի յարմար կը գըտնեմ շուտ Վարսենիք,

— Փարայ ունի, բայց իր դէմքը ճանկըթած են վարդենիք:

— Չէ մի՛ ըսեր, եկո՛ւր կարգուէ ու քեզ կին առ սա Ազնիւ,

— Բայց սիրտն անոր, իրաւ կ'ըսեմ անուսին պէս չէ՛ ազնիւ:

— Է՛ն յարմարը ի՛նչպէս մոռցայ քեզի համար է Արուս,

— Ինչե՛ր կ'ըսես ա՛ն ալ չըլլար քանի որ է խիստ թերուս:

— Է՛հ զարգացած աղջիկ մըն է, փափկամարմինն Բօլին,

— Քիչ մը շատկեկ հոգի կուտայ զուարճութեան ան պօլիմ:

— Ա՛ս ինչ է, ինչ ալ աղուոր անուն գիտե՛ս Տիրուհի,

— Չէ՛, չէ՛, երբեք չեմ ուզեր ես ինձ ունենալ տիրուհի:

— Անանկ է նէ չէ մի՛ ըսեր եկո՛ւր կին ա՛ռ քեզ Նարդուկ,

— Օ՛հ, բարեկամ, կը զառանցե՛ս, քսել գիտէ լոկ ... արդուկ:

— Դրա՛մ ունի, գեղեցկութիւն և զարգացած է Չապել,

— Շիտակ ատ է, որուն հետ ես կուզեմ իմ կեանքս կապել:

Բայց վստահ եմ, թէ ինձ երբեք չպիտի տան զայդ հուրի,

Ատոր համար այժմէն կ'ուխտեմ յաւէտ մնալ ամուրի:

Կարիմ

ԳԱԼՈՒՍՏ

ԶԷՔ ԽՆԴԱՐ...

Այն կիներուն վրայ՝ որոնք իրենց վտիտ ու տոգոյն դէմքին հակապատկեր մը նիւթելու համար ալեծածան գլխարկ մը կը դնեն՝ պօռոտ ու տգեղ գոյներու անճահ ցուցադրանքով մը՝ վառ մը պանա եան պագանի ձեւին տակ:

Այն մայրերուն՝ որոնք իրենց անօժիտ աղջիկը ամուսնացնելու խօս տենջանքէն հրդեհուած, կարգ մը պառաւ խլալուզներու «զաւակը քուկդ» է կ'ըսեն՝ բաղձալի յաճախորդ մը կարենալ ձեռք ձգելու համար:

Այն աղջիկներուն՝ որոնք երիտասարդի մը գեղանուրը ժպիտներէն յուսադրուած՝ պիւքի զիս կ'առնէի մտադրութիւնով կ'օրօրուին՝ այսպիսով իրենց անունն ու բարոյականն իսկ ... աղարտելով:

Այն օրիորդներուն՝ որոնց գերագոյն փափաքն է գեղեցիկ ու չիք ամուսին մը ունենալ՝ (գեղեցիկներու աչքը լոյս):

Այն պօռ կեզեհ անհամար զիւպպէներուն վրայ՝ որոնք փոխանակ իրենց պարագայ ժամերուն մէջ՝ օգտակար աշխատութեանց հետամուտ ըլլալու՝ յարմար առիթը կը նկատեն իրենց զբաղի օրիորդին հետ սիրաբանելու «մենք ինչո՞ւ մարդ չենք ըլլար ...»:

Այն նորեկուկ երկայնամազ պարոններուն՝ որոնք ուղղազրութեան ու շարադրական անհանդուրժելի սխալներով ... համեմուած իրենց յօգուածներուն «զամբիւղի» բեռին փառայ յաճախորդը նկատուելէն սրտմտած, ալ անգամ մ'ալ այս կամ այն թերթին չաշխատակցիլ կ'ուխտեն:

ՍԵՂՐԱԿ ՓԱՓԱԶԵԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ ՊԱՐՏԻԶԱԿ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի Սեպտ. 7ին (Ն. Տ.) Ամերիկացի ուսուցիչներուն վրայ պիտի աւելնայ ուրիշ մ'ալ, որուն Տիկինն եւս Տիկ. Զէյմպըրսի հետ մայրական հոգածութիւն պիտի ունենան աշակերտաց վրայ:

Տր. Բուպերթ Զէյմպըրս որ Գերմանիոյ մէջ մասնաւոր գովեստով արժանացաւ Վարդապետ Փիլիսոփայութեան տիտղոսին, իր հօրը

պիտի աջակցի իբր Փոխ-Տնօրէն: Վարժարանըս ունի իր մասնաւոր բժիշկը, որ մօտէն կը հսկէ տղայոց առողջական վիճակին վրայ: Ֆրանսերէնն պարտաւորիչ ընել որոշուած է: Վարժարանիս ընթացքը 7 տարի է: Աշակերտ մը առ նուազն 11 տարու ըլլալու է, Ա. Նախապատրաստական կարգը մտնելու համար և զահացուցիչ քննութիւն մը անցընելու է Հայերէն պարզ և վարժ ընթերցանութեան և ուղղազրութեան և թուաբանութեան չորս գործողութիւններու մէջ:

Գիշերօթիկներու համար տարեթոշակն է 16 Օսմ. ոսկի, կէսը մուտքի ատեն և կէսը Ծնունդին վճարելի անհրաժեշտ, հակառակ պարագային աշակերտը կը զրկուի դասերէն և վարժարանին մէջ չի պահուիր: Գործիական երաժշտութեան դաս առնողներ տարեկան 1 1/2 ոսկի վճարելու են, նաեւ իւրաքանչիւր աշակերտ վարժարան գացած օրը, Գանձապետին յանձնելու է 1 Օսմ. ոսկի գիրքի և այլ դպրոցական պիտոյից համար, աւելցածն աշակերտին կը վերադարձուի տարւոյն վախճանին:

Ջանքեր կ'ըլլան հաստատութեանս կցել Արհեստանոց մը և իբր սկզբնաւորութիւն առաջնագործութեան ճիւղ մը հաստատուած է. ո'վ որ ուզէ իր ժամանակին մէկ մասը տալ, այս արհեստը սորվելու, ամսական մէկ մէճիտի յաւելուածական վճարում մը պիտի ընէ:

Յարակից Boys' Homeի մէջ սահմանափակ թուով աշակերտներ կ'ընդունուին, արեկան 12 Օսմ. ոսկիով և հոս իրենց ընթացքն աւարտողներ, կ'մտնեն վարժարանիս կրտսերագոյն կարգը: Ծնողքներ՝ նամակատան միջոցաւ, իրենց զաւակաց զրամ կամ ծրար զրկել եթէ ուզեն, պէտք է զրկեն Իզմիտ, Կարապետ էֆ. Գոնտայեանի հասցէին:

Աւելի տեղեկութիւններու համար դիմել Մր. Ո. Ո. Բըթի կամ վարժարանիս գործակատար Գրիգոր էֆ. Շահպաղեանի, Կ. Պօլիս Պայպլ Հառուս, կամ Տնօրէնութեան, ի Պարտիզակ: Անոնք որ երկաթուղիի կէս գնով կ'ուզեն երթալ, իրենց անուններն արձանագրել տալու են Գ. էֆ. Շահպաղեանի՝ մինչեւ Սեպտ. 2 (Ն. Տ.). բացի Ուրբաթ և Կիրակի օրերէն ժամ 7-9 (Ը. Թ.):

— Ինչ կընէք կոր եղիա էֆէնտի, կըսէ
 իմբագրապետը զարմացած, առ դրամը գըր-
 պաննիդ դրէք:

— Չէ՛, վրայ կը բերէ եղիան, առէ՛ք,
 թերթին իրաւունքն է ան:

Իմբագրապետը ոտքի կելլայ.

— Եղիա պիտի վերցնես այդ դրամը:

— Կը վերցնեմ բայց ձեռագիրս ետ տուր:

— Ձեռագիրդ չպիտի առնու վաղը-
 նէ սկսեալ պիտի հրատարակեմ, բայց պիտի
 վերցնես առ դրամը:

Դիրկ գիրկի, մին ձեռագիրը կուզէ, միւ-
 րը ձեռագիրը չտալ ու դրամը չառնել միտ-
 քը դրած է. վերջապէս եղիան ինքզինքը
 արագօրէն խմբագրատունէն դուրս կը նետէ,
 մինչ իմբագրապետը ոսկին առնելով եղիաին
 կը հասնի. նորէն դրամը չառնէր. իմբագ-
 րապետը եղիաին գտակը կը յափշտակէ ը-
 սելով. — Հա՛, հիմակ ուր կուզես գնայ
 եւ գիտցած ըլլաս որ, ամէն միջոց ձեռք
 առնելով քեզի պիտի ղրկեմ դրամը: Ասոր
 վրայ եղիան յաղթուած ետ կը դառնայ եւ
 ամէն բան իր առջի վիճակը կստանայ:

Իբր պարզ անհատ մը կը ներկայանար
 եղիան ազդ մը ձեռքը եւ տալիք դրամը
 դրպանին մէջ ու իրաւունք բառը չըթու-
 քին վրայ. իսկ իմբագրապետը սրբապղծու-
 թիւն ու անիրաւութիւն կը համարէր «Գը-
 րասէր Աստուծոյ» դրամ առնելը:

ՏԵՄՈՒԷՆՈՍ ՍՐԲԱԶԱՆ

Մանրավէպ մը իր փայլուն օրերու կեան-
 քէն: Որովհետեւ Սրբազանը անդաստան կը
 պտտի եզեր առաջնորդութեանը տունէ տուն,
 ու թէ հարուստներէ եւ թէ բարեկեցիկներէ
 կը չիւրընկալուի, բայց հարուստներու սե-
 ղաններու վրայ լիաշուրթն օրհուրթիւններ
 տուող բերանը կը լռէ եսմամբ դասակարգի
 ճաշասեղաններու վրայ, օր մը աս ըրած
 զանցառութեանը պատճառը կը հարցնեն
 Սրբազանին ու ան կը պատասխանէ. — Հը՛,
 դուք անոնց պէս ինծի համար հիմեի կը մոր-
 թէ՛ք կոր, խուզի Յուրուներ կուտա՞ք կոր,
 չէ՛, ի՞նչ եսմամբ կերակուրներ, անկէ ետքը
 էյէր ձեր սեղաններուն ալ օրհնութիւն տալ
 պէտք ըլլայ նէ ան ատենը անոնց սեղաննե-
 րուն ալ պատարագ ընելու է: Սրբազան...

ԱՆՄԵՌՈՒԿ

ՄԵԾ ԳՐԱԳԷՏԸ ԵՂԻԱՆ ՄԵՌԱԾ

Անհաւատալի լուր մը, որ իսուր իրակա-
 նութեան կը յանգի:

Գրական ուսանին է՛ն փայլուն եւ է՛ն
 յարգելի դիմքն ալ կերթայ գրկել սեւ հողը:

Եղիա Տեմիրճիպաշեան մեռա՞ծ...:

Ահա իսրաւատու լուրը որ ելեֆտական
 հոսանքի մը պէս ցնցեց բոլոր իմացական
 աշխարհը եւ սուգը թաթխեց գրական աշ-
 խարհը, մեր մասին խօսելով:

Հին օրերու եւ հին գրականութեան վեր-
 չին շառաւիղներէն այս անսգիւս գրագէ-
 իմաստասէր, որ բաւական տարիներէ ի վեր
 կիսամեռ կապեր եւ որ աւելի դեպ ի ման
 ձգտում մը ունէր քան առողջ կեանք, վեր-
 ջապէս իր նպատակին հասաւ եւ գնաց, հե-
 ռացաւ հոն՝ ուր կը փափաքէր շատնց ի վեր
 իր մեղամաղձոս հիւանդութեանը երեսէն:

Եղիայի մահովը շատ բան կը կորսնցնէ
 մեր գրականութիւնը, եթէ երբեք ունեցածնուս
 այդ ինքնուրուի կրնայ տուիլ — իր մահը հան-
 գոյցը կրկնայ բարձր իմացականութեան եւ
 վսեմ գաղափարականին որ իր մէջ մարմնա-
 ցած եւ եւ իրմով ալ անհետացած:

Ո՛ր պէտք է փնտռել իր խիզախ գրիչը,
 ո՛ր պէտք է կարդալ իր կուռ ոճը, եւ ո՛ր
 պէտք է գտնել զինքն օգտուելու համար իր
 այնքան վսեմ գաղափարներէն, ու՛ր:

Պարզ գրագէտ մը չէր մեռնողը, ոչ ալ
 սովորական գրիչ մը, եղիան միակն եր իր
 դարձութեան միակ վարպետը՝ որ իր հետ տա-
 րաւ, իր հետ անեացուց անյաշորդ ու պա-
 րապ թողլով ասպարէզը:

Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ Չո-
 րեփաբքի, Բերայի Ս. Երուդութիւն Եկեղե-
 ցին մեծ հանդիսաւորութեամբ, ի ներկայու-
 րեան ամբողջ գրական աշխարհին ինչպէս
 նաեւ ակամաւոր անձնաւորութեանց:

Յարգանք իր անունին եւ աղօթք իր հոգ-
 ւոյն համար:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Մեր մեծանուն բանաստեղծին՝ Եղիա Տէմիրճիպաշեանի թաղման օրն իսկ, յուզարկաւորութենէ դարձին, կարգ մը պլան-պէֆ բանաստեղծ... ցուններ Նիքօլի սրճարանը գլուխ գլխի տալով՝ հանգուցելոյն տեղը բռնելու համար մէջներին գաղտնի քուէարկութիւն մը կատարեցին: Արդիւնքը յաջորդ թիւով:

ՆՈՅՆ. — Եկեղեցւոյ բակին մէջ չօրապ սեփիւմիւ դամբանականները այնքան չափազանցուեցան, որ յուզարկաւորներէն շատերու վրայ մարելիքի պէս բաներ մը նշմարող մէկ քանի բարեսէր անձնաւորութիւններ պատճառ եղան որպէսզի շատ մը դեռ կարդացուելիքներ գրպաններու խորը մնան:

ՆՈՅՆ. — Դամբանականներէն մէկ քանին հասկնալու համար, գրասէր մէկը լէվին «Հայերէնէ Հայերէն» բառգիրք մը կը փնտռէր:

ՍԿԻՒՏԱՐ. — Ստոյգ աղբիւրէ կը տեղեկացնեն մեզ թէ՝ մեր ծանօթ գրաբայլաջոն Ե. Թօլաեան. ամառնային սեզոնը անցնելու համար հոս օդաւէտ սենեակ մը կը փնտռէ, ուր չըլլայ ու չելլայ ոչ բիրէ և ոչ ալ սիւրբսինէկ:

ՆՈՅՆ. — Գիշերները հոս տաքէն քունը չի տանող օրիորդներուն համար Տէր ողորմեայ կը խնդրուի: (Աստուած քուն պարգեւեցէ, ամէն. Ծ. Լ.):

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Մինչեւ հիմա, միմիայն սէր, երկինք, լուսին երգող պարոնի մը՝ վերացականէն դրականին ացնիլը լսող աղջըկան աէր մայրեր փէշերին սոթտած վարպետ խլավուզ մը կը փնտռեն: (Լապտեր մըն ալ ինէ. Ծ. Լ.):

ՍԱՌԸՆԱՐ. — Անցեալ կիրակի ժամացի համար հոս հասնող մէկ քանի չաքաթականի միւսիւններ, վերջին շոգենաւը փախցնելուն առթիւ թէեւ մինչեւ կէս գիշեր տուն փնտռեցին գիշերելու համար, սակայն չգտնելով՝ Հաճի Միսաքի սեղաններուն վը-

րայ լուսցուցին: (Քուններնիդ անուշ, երազնիդ բարի, գալ կիրակի հետերնիդ եաթախ եօղան բերէք. Ծ. Լ.):

ՊԱՆՏՐՄԱ. — Պանտրմայի մեր բարեկամներէն խնդրելով կը խնդրենք, որպէսզի հաճին մեր Ազնիւ գործակալ՝ Տիար Թ. Չէրչեանի ողջ կամ մեռած ըլլալը իմացնել մեզի:

ՉԸՌ-ՉԸՌ. — Անցեալ կիրակի չիք միւսիւ մը, երբ նստող ուհիներուն խըզ ընելու համար աէթէն վար ցատկել ուզեց, հաւասարակշռութիւնը կորսնցնելով... վարը նըստող պոյնիկ չաքիւսը օրիորդի մը վրայ բէլքիքի պէս տարածուեցաւ: (Օրիորդ... քիչ պատճառեց ցաւ. Ծ. Լ.):

ԲԵՐԱ. — Ըռէնկի աղջիկ փնտռողներուն համար միակ եւ միմիակ կեդրոնը Շիտակ ճամբան է՝ ցորեկուան ժամը 4էն մինչեւ իրիկուն ժամը 9ը: Բոլոր անցնող դարացողներու երեսին ալերը գետինը կը կաթէ կոր... աղտոտ քրտինքին հետ գիրկընդհառւն...:

ԹԱՏՐՈՆ

Սկիւտարցիները պէտք չէ առիթը փախցնեն: Այս Շաբաթ գիշեր Թէքէի թատրոնը՝ Ահմէտ Ֆէհիմ էֆէնտիի կատակերգակ խումբը պիտի ներկայացնէ՝

ՏԻՒՐԱՆ-ՏԻՒՐԱՆ

Քրքալիւր զաւեց 3 վարագոյր

Շանթէօզներ, տանսէօզներ, պաղ կազէօզներ ևն.: Գիշերը չափաւոր չէ ալ... ԱժԱՆ:

Արեօմասք ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. 6. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի Գասէսի թիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՈՐԱԳԻՏԱԿ


Արսնց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Հանաւ, Թօփաշեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանք
տոկունութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բոլորիներու
եւ տղայոց չիք եւ գիմացկուն փոքրիկ-
ներու ճոխ միջերը մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50—44



ԱՌԻԹԷՆ

ՊՕԳՏՈՒԵԾԷՐ

ՓՈՒԹԱՑԷՐ ԵՒ ՆԵՆԷ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեպոյ պէշ խանի
Տակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սիդանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոն եւ Ճա-
րոնէ:

Ամենէն գոյաւորահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻՒ ՇԱՅԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ԶՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱՅ

Կ. Պոլսոյ համար սարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	» » 54 »	» »	27 »
Արսասահման	» » 14 Ֆր.	» »	6 Ֆր.

Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՅԷ՝

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԱՆ, Պապը-Ալի հասսէսի Ասատուեան տպարան քիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ չկը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանտարութեով եւ կամ բոսթայի փութով 20 հոկտեմբեր
20 ղրուչի հաշուով:

ԳԱՌՆԻԿ ՔԵԾԻԾԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հանո-Բուլո խան իբլ 2

Նախ փորձառուները, յետոյ խաբուողները միայն գիտեն էթ ո՛րչափ գոլար է, գտնել ու գնել սպրանքներ՝ որոնք թէ տոկուն ըլլան՝ թէ ճաշակաւոր և թէ . . . աժան :

Գառնիկ Բէշիշեան վաճառատունքս թօհաֆիէի էն առաջնակարգ Եւրոպական գործարաններէն բերել տուած է տեսակ տեսակ կանանց և արանց յատուկ Ֆանելաներ, գուլպաներ, քաշկիմակներ, ձեռնոցներ, փողկապներ, բրդեղեցներ, Ֆիլիփսու և խիստ ճաշակաւոր ներգնաւապիկներ, զլիսու շարքեր, քաւ ֆօռսէներ ևլն. ևլն.

Զերմապէս կը յանձրարենք անգամ մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն գիմելով պիտի հաստատեն թէ՛ զիցեռու ածանութեան, ճեսակի ազնուութեան և ապրանաց տկուցութեան երեք առաւելութիւնները ուրիշ ո՛ր և է տեղ կարելի է գտնել :

